



Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հարցէն. Тифлис. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յնչտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարելի է միթէ պատժել մեղաւորութիւնը չա-
պացուցված:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ներքին լու-
րեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտաքին լուրեր:
—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ:—ՊԱՏԱՍ-
ԽԱՆՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ՏԵՂԵԿԱ-
ՅՈՅՑ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Գիւղական ուսումնա-
րան:

ԿԱՐԵԼԻ ԵՒ ՄԻԹԷ ՊԱՏՃԵԼ ՄԵՂԱՌՈՐՈՒԹԻՒՆ
ԹԻՒՆԸ ՉԱՊԱՅՈՒՑՎԱԾ

Մենք ապրում ենք հաստատ և որոշ պե-
տական օրէնքների հովանաւորութեան տակ,
այն պետական օրէնքների, որոնք մի կողմից
հովանաւորում ու պաշտպանում են արդա-
րին, իսկ միւս կողմից ամենամեծ յանցաւո-
րին անգամ չեն պատժում առանց խղճմաւո-
րու ու մանրակրկիտ նախաքննութեան և
մանրամասն ու հրապարակական դատաւա-
րութեան:

Եւ այդ դատաւարութիւնը, որ արգասիք
է այն նշանաւոր օրէնսդրութեան, որ շնորհ-
ված է մեզ նախկին փառաւոր թագաւո-
րութեան միւս, նոյնքան նշանաւոր, վերանո-
րութեան օրէնքների շնորհով, իրաւունք ունի
օգտուել ամեն մի առաւելագոյն լինի նա
աշխարհական թէ հոգեւորական:

Առանց քննութեան ու դատաստանի,
պետական օրէնքով ոչ օրին չէ կարելի պատ-
ժել: Պատժել, մեղաւորութիւնը չապացուց-
ված, նոյն իսկ իրան իրաւունք չէ տալիս
ինքն կառավարութիւնը, որ իր ձեռքով
սահմանադրված օրէնսդրութեամբ և հաս-

տատված կանոնաւոր դատաւարութեամբ
ինքն իր օրինական սահմանն է որոշել ան-
հատներին մեղադրելու, պատժի են-
թարկելու և դատաւարութեան վերաբե-
րմամբ:

Մենք չենք կարող մեզ երեւակայել որ ար-
դարադատութեան բարիքը պետութեան
հպատակների մեծ մասը վայելի կարողա-
նային, իսկ նոյն պետութեան այլ հպատակ-
ներ, օրինակ հոգեւորական կոչմանը պատ-
կանող անձինք, բարդ չունենային նոյն ար-
տօնութիւններից օգտուել և կարողանային
պատժված լինել առանց մեղաւոր լինելու,
կամ նախ քան նրանց մեղաւորութիւնը
հաստատ փաստաբանութեամբ ապացուց-
ված լինէր:

Ահա ինչ առիթով գրեցինք մենք վերո-
յիշեալ տղերք: Անցեալ 1885 թւին յան-
կարծ լուր տարածվեցաւ թէ Ախալցխայի
հայ եկեղեցիներից միում մեծ անկարգու-
թիւն էր պատահել, որ, ինչպէս աւելաց-
նում էին, պատահել էր Ախալցխայի յա-
ջորդ, խորէն վարդապետ Ստեփանէի թե-
ղադրութեամբ ու գործմամբ: Այդ անկար-
գութեան մասին անմիջապէս հեռագրվեցաւ
թէ հոգեւոր և թէ մարմնաւոր իշխանու-
թիւններին, նոյնպէս մի հեռագիր էլ ու-
ղարկվեցաւ տեղական ուսուցչի «ԿԱՅԱՅԵ»
լրագրին, որ և սովեցեաւ այդ լրագրի է-
ջերում:

Պատահած անկարգութեան լուրը հաս-
նելով թէ հոգեւոր և թէ մարմնաւոր իշ-
խանութիւնների ականջին, նախ հոգեւոր
իշխանութիւնը, այսինքն լքմիմանիս ա. սի-
նոդը, անմիջապէս քննութիւն նշանակեց
այդ գործի մասին և մի հոգեւորական յար-
գելի անձնաւորութիւն, Արիստակէս աւագ
քահանայ Բէնքեանց, քննիչ ուղարկվեցաւ
Ախալցխա սինոդի կողմից գործը բարեկող-
ծօրէն քննելու նպատակով:

Ուրիշ կողմից քննութիւն նշանակեց նոյն
գործի մասին և երկրիս դատաստանական

կենտրոնական իշխանութիւնը, Թիֆլիսի
դատաստանական պալատի պրօկուրօրի (դա-
տախազի) նախաձեռնութեամբ:

Օրոշուած ամսին անցեալ 1885 թւին հո-
գեւոր իշխանութեան կողմից նշանակված
քննութիւնն աւարտվեցաւ: Գործի բոլոր
մանրամասն արձանագրութիւնները նոյն իսկ
ապագրվեցան Թիֆլիսում հրատարակված
մի տետրակի մէջ, որ կրում է «Խորէն վ-
Ստեփանէի գործունէութիւնը Ախալցխա-
յում» վերնագիրը:

Հոգեւոր իշխանութեան ձեռքով արած
քննութիւնը երեւաց որ ոչ թէ միայն հայր
Խորէն Ստեփանէ մեղաւոր չէ եկեղեցում
տեղի ունեցած խռովութիւններում, բայց
որ նոյն իսկ ամբողջ խռովութիւններն էլ
ամենեւին տեղի չեն ունեցել յիշեալ եկեղե-
ցում:

Հոգեւոր իշխանութեան այդ անցքերի մա-
սին արած քննութեան պաշտօնական ար-
ձանագրութիւնն էր մէջ գտնուած
ենք քննիչ հայր Արիստակէս Բէնքեանցի,
հետեւեալ եղբայրացիութիւնը:

«Ես, ի ներքոյ ստորագրեալ, քննիչ ծագեալ
խռովութեանց ի մէջ Ախալցխայ քաղաքի, ընթեր-
ցեալ է «ԿԱՅԱՅԵ» լրագրի գլխագիր Սխալցխա-
յէ, իբր զի ժողովրդական խռովութեան բազմութեամբ
մտեալ յեկեղեցի, բարձրացուցեալ են զազմու-
ն և զաղաղակ և մինչ զանախարակ են զեկեղեցա-
կան ստորին պաշտօնեայ մի, վերահասաւ լեալ
զայտանէ, իրազէ կողմ, զի չեն եղեալ յեկեղեց-
ւոյ յիշատակեալ անկարգութիւնը, որպէս հազոր-
ղեալ էին ուսուցչին, այլ յաւատարմ երեկոյեան
ժամերգութեան, փոխանորդ տեղւոյն գեր. Խո-
րէն ծ. վ. Ստեփանէի ծանուցմամբ յայտնեալ է
ժողովրդեան ի մասին ժողովեալ դրամոց վասն
գինւոյ զղանգակ ի պէտս Ս. Փրկչի եկեղեցւոյ,
թէ գտնին առ Տ. Նշիկաւ աւագ քահանայի Հա-
մարձման և զի առաջարկեցին նմա տալ զայն
գումար. և ժողովրդականք եկեալ ընդ յիշեալ քա-
հանայի ի հոգեւոր կառավարութեան, ստացեալ
են ի նոյն քահանայից զժողովեալ դրամն: Այս
է բոլոր իրողութիւնը»

Ուրեմն հոգեւոր իշխանութեան քննու-
թիւնը ոչ թէ միայն արդարացրեց Խորէն

վարդապետին նրա վրա բարձած մեղա-
դրանքներից, բայց և չը դատաւ և ոչ մի
հետք իբր պատահած անկարգութիւնների
Ախալցխայի եկեղեցում: Իսկ դատաստանա-
կան իշխանութեան քննութիւնը նոյն ինդ-
րի առիթով դեռ ևս աւարտված չէ և պրօ-
կուրօրը դեռ տուած չէ իր եղբայրացու-
թիւնն ու որոշումը գործի մասին և դեռ
յանձնած չէ գործը դատաստանի դատաւա-
րութեանը:

Անշուշտ եթէ Բէնքեանց աւագ քա-
հանայի ճիշդ չէ արել իր քննու-
թիւնը, հոգեւոր իշխանութիւնը իր ձեռքով
նշանակված քննիչի եղբայրացութեամբ հա-
կառակ վարկելով, պէտք է նախ պատժել
այդ կողմնապահ քննիչին. կամ եթէ հո-
գեւոր իշխանութիւնը անկարող է պատժել
նրան, հաստատ համոզված լինելով, որ քա-
հանայ-քննիչի գործողութեան եղանակի
մէջ ոչ թէ կողմնապահութիւն պէտք է ըն-
դունել, այլ ահամայ սխալմունք, որ առա-
ջացել է այդ տեսակ գործերի մէջ անկործ-
անելուց, այն ժամանակ պարտաւոր էր
նշանակել մի նոր քննութիւն թէ Խորէն
Ստեփանէի մասին և թէ ընդհանրապէս
եկեղեցում պատահած անկարգութիւնների
մասին:

Բայց այդ չը կատարվեցաւ և հաջ ապա
գործի ինչ պատկեր է ներկայանում մեր
առջև, մի պատկեր, որ հակասում է ամեն
մեղադրվածի վերաբերմամբ պետական օ-
րէնքի իրաւաբանական ամենատարրական
կանոնների տրամաբանութեանը:

Մարդը մեղադրված է որ և է յանցան-
քում. նրա վրա նշանակված են երկու տե-
սակ քննութիւններ՝ միւր հոգեւոր, միւր
մարմնաւոր իշխանութեան կողմից: Առա-
ջինը աւարտված է յօդուած մեղադրվածի,
իսկ երկրորդը դեռ շարունակելով է իր որ
և է եղբայրացութիւնը գործի մասին տուած
չէ, և այնու ամենայնիւ մի կողմից ար-
դարացրած, իսկ միւս կողմից դեռ չը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Մտքը գիւղացու կեանքի մէջ, դիտեցէ գիւղա-
ցու կեանքի բոլոր մանրամասնութիւնները, ծա-
նօթացէ գիւղացուն նրա աղքատ սոսկի մէջ,
հետեւեցէ նրան ցերեկվայ ծանր աշխատանքի
ժամանակ, թափանցեցէ գիւղական ներքին հոգե-
կան—բարոյական աշխարհի խորքերը, շօշափեցէ
նրա վէրքերը, գտէ նրա ուրախութեան զգաց-
մունքների աղբիւրները, քննեցէ գիւղականի հասա-
րակական կեանքը և նրա գաղափարները հասարա-
կական կեանքի վերաբերութեամբ, և ապա այդ
բոլորից յետոյ ամփոփեցէ ձեր սոցալատիկութիւնները,
գուրս բերեցէ այդ բոլորից եղբայրացութիւնները,
և դուք կը համոզվէք, մի կողմ թողնելով հանգա-
մանքների դանազան ազդեցութիւնները, արտա-
քին՝ ժամանակի հետ բերուած և ժամանակաւոր
այլ և այլ պայմանները.—որ գիւղական կեանքի
փոփոխութեան համար, այդ կեանքի կանոնաւոր
զարգացման համար հարկաւոր և ամենապիտան
ոյժերից մէկը՝ գիւղական ուսումնարանն է:
Սակայն գիւղական ուսումնարան ասելով ես
չեմ հասկանում, և չը պէտք է հասկանալ մի
սահմանափակ և զրկւալիք սովորեցնող մի
բան, և այդքան մեծ նշանակութիւն տալով ժո-
ղովրդական կեանքի զարգացման համար գիւղա-
կան ուսումնարանին, ես չեմ պատկերացնում ըստ
սովորականին մի խոնար ու մութ շինութիւն, քա-
նի մի դրեք ձեռքին ուսումնարան երթեկեղող ա-
շակերտներով, և վերջապէս, սիրտուկ հազգ
ուսումնարանի պատերից դուրս ոչինչ չը տեսնող
և չը լսող մի վարժապետով...
Ոչ: Ներկայ հանգամանքներում գիւղական ու-

սումնարանը պիտի լինի այն խողովակը, որով կա-
րող են և պէտք է մտնեն դիւղի կեանքի մէջ՝ նոր
հայեացքներ, նոր մտքեր, նոր սով, նոր կուլտու-
րա, անտեսագիտական նոր զարգացում, անկախ
և մարդավայել կեանքի համար անհրաժեշտ նոր
միջոց և պայման:

Չեմ կարծում, որ այդպիսի մի նպատակի ծա-
նայող ուսումնարան իր հարկաւոր ծրագրով, ուղ-
ղութեամբ, հրաշք համարուի մի գիւղի մէջ, որը
ունենայ, միջին թիւը վերցրած, 50—60, կամ 60
—70 տուն ընտանիք, և որը ներկայացնէ տարուայ
եղանակներին յարմար, մի կամ աւելի, դաշտային
կամ տնային, պարագայումը ունեցող համայնք:
Աւելորդ չէ յիշել, որ ես հարցի պարզութեան
համար համայնք եմ վերցնում թէ և դա համար
մեր կեանքի մէջ պակաս են մի քանի պայմաններ.
Ասակայն այդ պէտք է, որպէս զի ստիպված չը
լինեմ շօշափել այն արտաքին հանգամանքները և
պայմանները, որոնք ազդեցութիւն ունեն մեր գիւ-
ղական համայնքի կեանքի վրա, գիւղի շրջանից
դուրս: Համայնքի կազմակերպութեան հետ փոքր
ի շատ է ծանօթ ընթերցողը կարող է աւելացնել
այդ բոլորին այն առաւելութիւնները, որոնք կան
և պիտի լինեն համայնքի կեանքի մէջ, և մեծ նը-
շանակութիւն ունեն հասարակական և ընկերային
կան կեանքի զարգացման համար: Սերունդ սե-
րունդ է յաջորդել այն ժամանակից, երբ գիւղա-
կան ուսումնարանը կեանք առաւ մեր մէջ՝ ժողո-
վրդական կրթութեան զարգալիքի ընդհանրաւո-
րաց յետոյ: Թողնեմ մի կողմ այդ ուսումնարանի
պատմութիւնը և ունեցած նշանակութիւնը, այս-
քանը միայն ճիշտ է և համարձակ կարելի է ա-
սել, որ մեր աղքատ, նիւթաւոր անապատ
գիւղացին չէ ուղում մտածել ուսումնարան ունե-
նալու մասին, թէ և նրա կարեւորութիւնը զգում
է, և գիւղական ուսումնարանների մասին խօսե-
ցած ժամանակ, յաճախ է պատահում լսել այս-
պիսի նկատողութիւններ. «Թողէք խեղճ գիւղա-

ցին հանգիստ սրտով ուսու իր քրտնեղով. ձեռք
բերած մի կտոր սև հացը»: Այդ բոլորը լաւ գա-
ղափար է տալիս մեր ժողովրդական կրթութեան
և գիւղական ուսումնարանին մինչև այժմ բռնած
ուղղութեան վրա:

Գիւղացին ուսումնարանի և իր կեանքի ապա-
հովութեան խնդրի մէջ ոչ մի կապ չէ տեսնում,
որովհետեւ այդպիսի բան երբեք չէ տեսնել: Այդ
բաւական չէ. գիւղական ուսումնարանի պահպա-
նութիւնը գիւղական հասարակութեան համար մի
մեծ ծանրութիւն է փողի կողմից, և աղքատ գիւ-
ղացին այդ ծանրութիւնը տանում է, իր որոշ
լաւ ապագայի յայտով...:

Սակայն նպատակին ծառայող իսկական գիւ-
ղական ուսումնարանին նպատակն էլ հինգ այն է,
որ գիւղացին կարողանայ, ոչ թէ մի կտոր հաց,
այլ մի կտոր էլ միս ուսու հացի հետ միասին, և
այն էլ խաղաղ սրտով, դիտակցաբար, և ոգևորիչ
զգացմունքներով դէպի իր շրջապատողները և
դէպի իր ապագայ սերունդը: Ահա այդ բաների
լայն նշանակութեան մէջն է ուսումնարանի ար-
ժեքը և միտքը: Այդ գիւղական ուսումնարանը
իր պատերի մէջ կերպարանք տալով գիւղի մա-
տաղ սերնդին, պարտաւորելով նրան նոյն, բայց
աւելի բարձր և կանոնաւորված կեանքի համար,
պէտք է չլիւրի հասարակական կեանքի հետ,
պէտք է ուղղութիւն տալ գիւղական կարծիքներին
և կենցաղակարգութեան զարգալիքական պայման-
ներին, պէտք է գէթ ապագայ սերնդի կանոնաւոր
զարգացման նպատակը ներկայ կեանքի մասերը
կարդի բերէ, պէտք է կապի գիւղացուն հողի հետ,
պէտք է ոյժ տալ նրան իշխելու հողի վրա, պէտք
է միջոց տալ նրան գիւղակարելու իր կեանքի որ-
պիտեական պատճառները, պէտք է, վերջապէս,
նրան ապրելու նպատակ ցոյց տալ... Գիտեմ, այդ
բոլորը մի ժպիտ պիտի յառաջ բերէ մեր այժ-
ման կրթական գործին և վարժապետութեան հետ
ծանօթ ընթերցողի դէմքի վրա: Սակայն շուա-

պում եմ զգուշացնել: Իմ խօսքս այն բանի մա-
սին է, թէ ինչպէս կարող է լինել: Հասարակա-
կան հարցերի կանոնաւորութեան և կատարելու-
թեան մասին խօսքը, ի հարկէ, միտք չէր ունե-
նայ...

Ժխտել անկարելի է, որ մեր գիւղացին կրօնա-
կան կամ մի այլ խաւարամիտ և նախապաշա-
րեալ պատճառից դուրս ընդդէմ լինի ուսումնա-
րանի զարգալիքին: Ընդհակառակը, մեր ժողո-
վուրդը դեռ պատմական կեանքի շատ հին ժա-
մանակներից տեղեկութիւն և գործ է ունեցել
ուսման գործի հետ: Չանագնութիւնը այն է
միայն, որ նախկին վանքերի, վարդապետների և
տիւրացունքների, և բուն կրօնական-եկեղեցական
կղզիացած գործնական վարժութիւնների փոխա-
րէն պիտի լինի նոր ուսումնարանը իր գործնա-
կան և բազմակողմանի նպատակներով: Ընդհակա-
ռակը, մեր ժողովրդեան կեանքի ուսումնասի-
րութիւնը բերում է մեզ այն համոզմունքին, որ
այդ ժողովուրդը ոչ միայն ընդդէմ չէ ուսումնա-
րանի մտքին, այլ նրա մէջն է տեսնում իր գա-
ւակների երջանկութեան միակ միջոցը: Եթէ մի-
չև անգամ անհետաւոր և ժողովրդական հա-
յեացքների թշնամի անպատրաստ վարժապետների
չնորհիւ այս կամ այն գիւղում թիւր կարծիք է
կազմուել նոր ուսումնարանի մասին, դուք միայն
բացատրել դէպքեր են: Գիւղական, նահապետական
ամենամութ դրութիւնից դուրս եկած գեղջուկը,
իր կեանքի մէջ մի մաշող ծանրութիւն է տես-
նում, և այդ ծանրութիւնից իր որդուն աղատող
նա միմիայն ուսումն է համարում: Եւ տեսնելից,
իր իմացածից եղբայրացի է գիւղացին, որ ուսում-
նարանի և հողի մէջ ոչինչ կապ չը կայ, որ որ-
դուն կարգաւորել սովորեցնող ուսումնարանի
նպատակն է հանել գիւղացու մանկան նոյն գիւ-
ղի շրջանից, և որդուն մի քանի ժամանակ վար-
ժապետին տալով, գիւղացին պահանջում է նրա-
նից, որ նա գնայ իր համար ուրիշ պարագայում:

ուր Արգար Գովհաննիսեանի յիշեալ առաջարկութիւնը ուրիշ կերպ խմբագրւած, քան թէ «KAB-KAB» տպել էր նրան, փետրվարի 27-ի իր 54-որդ համարի մէջ: Ահա ինչ է առաջարկում այժմ պ. Գովհաննիսեան. «Քաղաքային քարտուղարին պարտաւորեցնել հետեւի Գումարի նիստերի մասին լրագրողներին տրված անձնուր տեղեկութիւնները»: Մեզ չէ հետաքրքրում այն հարցը, թէ որքան դրամով աւելի կը ծանրաբեռնուի քաղաքային քարտուղարը, բայց մեզ դարմանում է որ ինքն պ. ձայնաւորը, մինչև մեր յօդուածի հրատարակելը, չը մտածեց նոյն միջոցը գործ դնելու, որ նա առաջարկում է քարտուղարին, այն է «KAB-KAB» լրագրում սխալ կերպով արձանագրված իր առաջարկութեան մասին նոյն ուսաց լրագրի էջերում անմիջապէս կարճ հերքում գետեղելու, քանի որ նա ինքն էլ հասկանում է թէ այն ձևով խմբագրված առաջարկութիւնը ինչ խոշոր տարակուսութիւնների առիթ պէտք է տար: Եւ մինչև այժմ այդ հերքումը չենք տեսնում «Կոմկոմ» լրագրում:

ՆՈՒՆԻՍԻՑ մեզ գրում են: «Այստեղի հայոց դպրոցի սկսած շինութիւնը աջող կերպով չէ կառուցւում և քանի որ նիւթական միջոցները պակաս են այդ շինութիւնը վերջացնելու համար: Թողտ այդ շինութեան բացված էր մասնաւոր հանգանակութիւն և ստորագրական թերթը յանձնված էր մի պարունի: Բայց մինչև այժմ ստորագրութեան հետեանքը մեզ անյայտ է մնում: Չենք կարող ասել արդեօք պարտքը հանգանակել է փողերը, միայն դեռ ժամանակ չունեցաւ շինութեան կարգադրիչներին հաշիւ տալ, թէ իր թերթի վրա ստորագրողները միմիայն ստորագրվել են և դեռ իրան փողեր չեն վճարել»:

Կիրակի, մարտի 16-ին, թիֆլիսի Ներսիսեան դպրոցի համար նշանակված հոգաբարձական ընտրութիւնը չը կայացաւ այդ օրը, ինչպէս մեզ ասեցին, որքան առաջնորդի յանկարծակի հիւանդութեան պատճառով: Ընտրութիւնները յետոս անցված են հետեւեալ կիրակի, 23-ին մարտի:

Մեզ ուղարկված է հետեւեալ ծանուցումը: «Ներսիսեան հոգեւոր դպրոցի հոգաբարձութեան ընտրութիւնը անակնկալ դիպուածով յետաձգվեցաւ: Կը կատարուի առաջիկայ կիրակի, ամսին 23-ին, 12 ժամին ս. պատարագից յետո, ուսար խնդրում ենք եկեղեցիների ծխականներին պ. պ. պատգամաւորներին որոշեալ օրը ներկայ լինել ընտրութեանը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Նիւ-Եօրկից մարտի 5-ից հեռագրում են «Indépen. Belg.» լրագրին, որ ձիաբարձ երկաթուղու վրա ծառայողները շարունակում են իրանց գործադուլը: Ձիաբարձը վարչութիւնը կամեցաւ նոր երկին հրաւիրել, բայց ծառայողները կատարած արգելեցին ձիաբարձ երկաթուղու գնացքները, փողոցներում պատնէշներ շինելով: Միւս օրը վարչութիւնը համաձայնեցաւ ասելայնել վարձը: Ծառայողները դրամով չը բաւականացան, այլ պահանջեցին, որ վարչութեան մի քանի վերատեսուչները պաշտօնադուր լինեն:

—Պետութիւնների մէջ տարածայնութիւնների կան այն մասին, թէ որտեղ պիտի գումարվի զեպակածոցով: Տաճկաստանը ցանկանում է, որ նա գումարվի Պոլսում: Գորան ընդդէմ է գլխաւորապէս Ռուսիան: Խաղաղ ատաջարկում է Բերլինը: Հաւանական է, որ այդ առաջարկութիւնը ընդունելութիւն գտնէ և զեպակածոցովը գումարվի Բերլինում:

—Վիեննայի պաշտօնական շրջաններում կարծում են, որ Յունաստանը պատերազմական դրութեան մէջ մտնելու ուղում է ստիպել Բ. Գրանը զինուորականներ անկուս: Տաճկաստանը անապիտ ծախքեր է անում զորքը պատերազմական դրութեան մէջ պահելու համար:

—Վիեննայից գրում են, որ պրուսական կառավարութիւնը մերժեց լեհ բանաստեղծ Նիկոլայ Լիւնդերը, որով նա խնդրում էր երկրաքանդ իր արձակուրդը: Նիկոլայ Լիւնդերը պարտաւոր է մայիսի 1-ից բանտը մտնել:

—Գերմանական ընկեստազը շարունակում է զինու. մենախաճառութեան խնդրի քննութիւնը: Ազատամիտ կուսակցութիւնը ընդդէմ է օրինադր-

ծին և պնդում է, որ մենախաճառութեան այդ օրինադրով գործարանատէրերը կախում պիտի ունենան կառավարութիւնից, և որ գործածութեան պահանջն էլ կը թուականայ: Ֆինանսների միւնիստը պատասխանելով աղաւաղում և աղաւաղում կառավարութիւնների այդպիսի դատողութեանը, յայտնեց, որ ինքը ոչինչ պաշտպան չէ տեսնում նոր օրինադրի մէջ: Վիեննայից նկատեց, որ մինչև ինքը իշխան Բիւմարկը չը բացատրէ այդ օրինադրի հիմունքները, ոչինչ դրական արժանաւորութիւն չէ կարելի տալ օրինադրին: Կենտրոնի անդամները մէկը նկատեց, որ առհասարակ կառավարութեան վերջին բոլոր օրինադրերը բոլորն էլ անմշակ, անհիմն և հում նիւթեր են: Թէև ինքը միւնիստը չառ բացատրութիւններ չէր կարողանում տալ, բայց պաշտպանում էր կառավարութեան օրինադրին: Եւ այդ գործառնաւի չէ: Բիւմարկը միմիայն անպայման հնազանդներին է միւնիստական պարտքէլ տալիս:

—Մանչեստերի, Լոնդոնի և մի քանի այլ քաղաքների սոցիալական խմբերի հրաւերի հիման վրա, բանտերը նոր ժողովներ կազմեցին և որոշեցին պահանջել կառավարութիւնից՝ կազմակերպելու անմիջապէս հասարակական պարագմունքներ այն բանտերին համար, որոնք սովորաբար լինելու վտանգին են ճիւղարկված:

—Փետրվարի 22-ի համայնքների ժողովի նիստը բաւականին մեծ տպաւորութիւն է թողել Անգլիայում: Այդ ժողովին պ. Լաբուշէր, ինչպէս ամենայն տարի, իր առաջարկութիւնը արաւ, որով առաջարկում է ոչնչացնել Լօրդերի պալատը: Այդ առիթով եղած քուէարկութիւններից երեւցաւ, որ Լաբուշէրի առաջարկութիւնը ընդունող պատգամաւորների թիւը այս տարի էր կուսակցական անկողնից 80 տարեցի թիւից: Անցեալ տարի 160-ի արմատականները այդ առիթով մեծ ուրախութիւն յայտնեցին:

—Իշխան Բիւմարկի համար գերմանական ընտրութիւնը և պրուսական լանդտագի ներկայ դրութիւնը և ուղղութիւնը ամենապիտանական նշանակութիւն ունի: Երկրից կանցելը միանգամայն հանդէս բերեց նշանաւոր խնդրի: Նա այդ խնդիրների դրական վճռվելու մէջն է տեսնում իր յաջողութիւնը և մեծութիւնը, թէ է Վիեննայից մի քանի անգամ նկատեց չոր այդ յաջողութեան համար մեծ ամենքը կը զղջար: Գլխու մենախաճառութեան խնդիրը կարելի է հաստատ ասել որ անախող վերջ կունենայ կառավարութեան համար: Սոցիալիստներին վերաբերեալ օրէնքների ժամանակը երկարացնելու հարցը գիտար թէ միանգամայն Բիւմարկի ցանկացած հետեանքը ունենայ: Իսկ լեհական հարցի մասին Բիւմարկը ամենայն միջոց գործ է դնում, և մինչև անգամ չէ հրաժարվում, տեղը եկած ժամանակ, մի քանի օր հիւանդ ձևանալ և ոչինչ յարաբերութիւն չունենալ ոչոքի և ոչնչի հետ:

—Գերմանական սոցիալիստների վերաբերեալ օրինադրի քննութիւնը վերջացաւ: Վիեննայից տաւաճարութիւնները այդ մասին ընդունեցան: Օրէնքի նշանակութիւնը կունենայ ոչ թէ հինգ տարու ալ մինչև 1888 թ. սեպտեմբերի 30-ը, և այն եւ Բերլինի և շրջակայների համար: Ուրեմն Բիւմարկը իր առաջարկած նախագծերից մէկի համար ընդգիծութեան հանդիպեցաւ: Անկախած այդ անյաւջողութիւնը կաղել է ամեն հարցերի վրա:

—Լոնդոնից մարտի 9-ից հաղորդում են, որ Լոնդոնի բաղամարդ թաղերից մէկում տեղի ունեցաւ մի ժողով սոցիալիստների առաջադրութեամբ: Ժողովին ներկայ էին մի քանի հարիւր մարդիկ: Չամբիւծը պնդում էր, որ պէտք է ոյժ տալ սկսված շարժմանը, մինչև որ կը բարձրվի բանտերի վիճակը: Ջոն Բօրնսը կատարի կերպով պահարկում էր Չեմբերլինի վարժանքը, և այն միտքը յայտնեց, որ ոչ միայն աշխատելու ուղղութեան պէտք է պարագլուխը տալ, այլ պէտք է, որ նրանց վարձի երկու երրորդ բանտերի մասին գումարատէրերի դրամը, ինչպէս այդ լինում է այժմ: Մի ժողով էլ տեղի ունեցաւ Մանչեստերում. ներկայ էին ասել քան 5,000 բանտեր:

—Յունաստանից եկած լուրերը հաստատում են, որ երկրի դրութիւնը անորոշ է դեռ ևս: Գլխաւորի միւնիստութիւնը դեռ չէ տուել վերջնական պատասխան իր հրաժարականը: Անհրաժեշտ է միայն, որ միւնիստները այժմեանից իրանց կողմնակիցներին տալիս են չքանչանք և դրամական վարձատրութիւն: Այդը շարունակում է մնալ պատերազմական տրամադրութեան մէջ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզի դիտութեանց ձեւարանի կողմից՝ կատարած կենդանիները վնասաւորների համար հիւանդանոց հիմնելու խնդրի քննութեան համար կազմուած յանձնաժողովը ներկայացրեց ձեւարանին հետեւեալ նախագիծը. 1) Հիւանդանոցը պիտի լինի Պատեօրի անունով: 2) Հիւանդանոցի մէջ կընդունվին բայց ֆրանսիացիներից և օտարականներից: 3) Ինչպէս ճիւղարկուած, այնպէս էլ արտասահմանում կը բացվի հանգանակութիւն հիւանդանոցի պահպանութեան համար: 4) Հաւաքուած փողերը կը ծախվին յանձնաժողովի կարգադրութեամբ, որի նախագահը կը լինի Փարիզի դիտութեանց ձեւարանի նախագահ պ. Ժիւլիէն Գըլա-Գրավէօր, իսկ փոխնախագահը պ. Գոսլէն: 5) Նոսիւրաւորութիւնները կընդունվին Ֆրանսիական պետական բանկում, հողային բանկում, և հարկերի հաւաքողների մօտ: 6) Նոսիւրաւորների անունները կը տպագրվին «Journal Officiel»-ի մէջ: Այդ նախագիծը մշակող յանձնաժողովին մասնակցում էին պ. պ. Եարիօ, Պոլ-Բեր, Ֆրէյսիէ, և Պատեօր:

Փետրվարի 21-ին, Սօրբոնի ընդարձակ ամֆիթատրոնում, տեղի ունեցաւ Մանչեստրի և Լոնդոնի և Լոնդոնի ֆրանսիական ընկերութիւն և Լոնդոնի ֆրանսիական ընկերութիւնի միջև ընդհանուր խորհուրդի նախագահ պ. Ժիւլիէն Գըլա-Գրավէօր, իսկ փոխնախագահը պ. Գոսլէն: 5) Նոսիւրաւորութիւնները կընդունվին Ֆրանսիական պետական բանկում, հողային բանկում, և հարկերի հաւաքողների մօտ: 6) Նոսիւրաւորների անունները կը տպագրվին «Journal Officiel»-ի մէջ: Այդ նախագիծը մշակող յանձնաժողովին մասնակցում էին պ. պ. Եարիօ, Պոլ-Բեր, Ֆրէյսիէ, և Պատեօր:

Փարիզի դիտութեան ձեւարանի կողմից՝ կատարած կենդանիները վնասաւորների համար հիւանդանոց հիմնելու խնդրի քննութեան համար կազմուած յանձնաժողովը ներկայացրեց ձեւարանին հետեւեալ նախագիծը. 1) Հիւանդանոցը պիտի լինի Պատեօրի անունով: 2) Հիւանդանոցի մէջ կընդունվին բայց ֆրանսիացիներից և օտարականներից: 3) Ինչպէս ճիւղարկուած, այնպէս էլ արտասահմանում կը բացվի հանգանակութիւն հիւանդանոցի պահպանութեան համար: 4) Հաւաքուած փողերը կը ծախվին յանձնաժողովի կարգադրութեամբ, որի նախագահը կը լինի Փարիզի դիտութեանց ձեւարանի նախագահ պ. Ժիւլիէն Գըլա-Գրավէօր, իսկ փոխնախագահը պ. Գոսլէն: 5) Նոսիւրաւորութիւնները կընդունվին Ֆրանսիական պետական բանկում, հողային բանկում, և հարկերի հաւաքողների մօտ: 6) Նոսիւրաւորների անունները կը տպագրվին «Journal Officiel»-ի մէջ: Այդ նախագիծը մշակող յանձնաժողովին մասնակցում էին պ. պ. Եարիօ, Պոլ-Բեր, Ֆրէյսիէ, և Պատեօր:

Փարիզի հասարակական դրամաբաններից բանտերներին իրաւունք տուեցին, վերջինի տուն տանելու համար գանազան գրքեր և ուսումնական պետություն: Այդ բոլորի ծախքը յանձն առան զանազան մասնաւոր անձինք:

ՄՇԱԿ «ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 մարտի: Հրատարակված է սենատի կարգադրութիւնը, որի համեմատ զեպակածութիւնի և քաղաքային վարչութիւնների միջնորդութեամբ բացվող ուսումնարանների համար, որոնք գտնվում են կառավարութեան հսկողութեան ներքո, նշանակված սկզբնական և մշտական դրամական օժանդակութեան չափը չէ թոյլ տրվում նուազեցնել:

ԲԵՐԼԻՆ, 14 մարտի: Բանտերի անկարգութիւնները տարածվեցան միւս քաղաքներում և արձագանք գտան և Բրիստոլում:

Ի. ՊՈԼԻՍ, 14 մարտի: Ռուսաստանը յայտնեց, որ նա ստիպւած է մերժել Խաղաղի այժմեան առաջարկութիւնը, որով պիտի տրվի բոլորապէս իշխանին, ինչպէս Բոլշակովի կառավարողին, Ռուսիական Բոլշակովի գլխաւոր-նահանգապետի պաշտօնի ձեռք բերելը անորոշ ժամանակով, քանի որ թիւրք-բոլշակովի համաձայնութեան մէջ յայտնված է արդէն բոլոր պետու-

թիւնների կողմից հաւանութիւն գտած այն միջոցը, որով անպայման կերպով պահպանվում է Բերլինի դաշնագրի 17-րդ յօդուածի ոյժը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մարտի: Հրատարակված է ժամանակաւոր օրէնսդրութիւն, որը վերաբերում է զօրքի պահեստը լրացնելու պարագրէիներով, որոնք ստանում են այդ ստորիճանը առաջին կարգի կամաւորների համար նշանակված առանձին արտօնական քննութեան անցողիները, նոյնպէս և այն կամաւորների և վիճակով ընդունվողների համեմատ, որոնք կրթութեան նոյն աստիճանն ունեն: Քննութիւն տուածները անմիջապէս նշանակվում են պահեստի զօրքի մէջ: Թոյլ տուած է ծառայութեան մէջ գտնվող բարձրագոյն և միջին կրթութիւն ստացածներին, որոնց իրաւունք է տրված, փետրվարի 10-ի օրէնքի համեմատ մնալ ծառայութեան մէջ առաջվայ կարճ ժամանակաւոր միջոցներով, վայելել ժամանակաւոր կանոնադրութիւնից դուրս հետեւեալ արտօնութիւնները, բոլոր ծառայողներին, որոնք պարտաւոր են ծառայելու 3 և 6 ամսվայ ժամանակով, եթէ կը մնան ծառայութեան մէջ մինչև բանակարութեան վերջը և կը ստանան ուսուէր-օֆիցերի կոչումը, թոյլ է տրվում նրանց այս տարի քննութիւն բռնելը, թէև ծառայութեան մէջ հաշվել կը սկսվի յունվարի 1-ից յետոյ: Իսկ նրանք, որոնք պարտաւոր են տարի և կէս ծառայել ուսուէր-օֆիցերի կոչումով, նրանց թոյլ է տրվում հարցաքննութիւն տալ ներկայ տարվայ ընթացքում, միայն այն դէպքում, եթէ նրանց ծառայութեան պարտաւորի ժամանակամիջոցը կը վերջանայ մինչև 1 յունվարի 1887 թ., հակառակ դէպքում թոյլ է տրվում դրանց քննութիւն բռնել կող տարի: Ֆրանսիական դեսպան Ապպլեր երէկ ներկայացրեց Թաղաւոր Կայսրին իր հրաժարական թղթերը: Բուխարական դեսպանութիւնը երէկ ներկայացաւ Թաղաւոր Կայսրին և բերեց թանագաղին ընծաներ: Երէկ յանկարծ վախճանվեց յայտնի քարոզիչ աւագերէց Խոսն Պոլխազով:

ԱՅԼԵՆԻ, 15 մարտի: Հրատարակված է հրովարտակ երկու կարգ պահեստի զօրքերին ապրիլի 4-ին գէջել տակ կանչելու մասին:

ԲԵՐԼԻՆ, 15 մարտի: Ուղեկց ընթերցանելու վերաբերութեամբ նշանակված օրինադրի երկրորդ ընթերցումը ժամանակով ընթացողները, իշխան Բիւմարկը խիտ կերպով քննադատեց իր պահանքի ղեկ եղող, պարագմանտի անդամների մեծամասնութիւնը և յայտնեց որ այդ դիմադրութիւնը խիտ վտանգաւոր է գերմանական պետութեանը ապագայում:

ԼԻՆԻ, 15 մարտի: Այստեղի դրութիւնը փոքր ինչ լաւացել է և աշխատանքները մասամբ վերստին սկսվել են, բայց Եարլըրուայի մէջ և չրթականերում բաւական ծանր չփութութիւնները պատահեցին կցված կողպատմանների հրճութիւնները և բաղմամբ շինութիւնների քար ու քանդ անկելու հետ: Ապստամբների և ժամադարմների մէջ տեղի ունեցան արիւնահեղ ընդհարումներ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մարտի: Բուխարական դեսպանին շնորհեց սուրբ Աննայի 1-ին աստիճանի չքանչանք աղամանդով. դեսպանութեան միւս անձինքը արժանացան նոյնպէս պարգևների, օրինակ սուրբ Ստանիսլավի 2-րդ աստիճանի չքանչանք աստղերով: Բերլինից հասաւ Պետերբուրգ այսօր ուսուցիչ դեսպան կոմս Տոլալով:

ԲԵՐԼԻՆ, 15 մարտի: Երէկ ամբողջ գիշերը անկարգութիւնները շարունակվեցին, այրված են բաղմամբիւր դղեակներ, հինգ ամբողջներ և ութը ապակեայ մեծ գործարաններ, բանտերը սպառնում են քաղաքին: Բրիտանի ըբերապահ զօրքի մնացած մասը պատրաստ է դնալու դէպի Ռուս: Ջինտերները հրացաններ դատարկեցին բանտերների վրա, որոնցից սպանվեցան հինգ հոգի և շատերն էլ վիրաւորված են:

ԼՕՆՂՈՆ, 15 մարտի: Չեմբերլին և Թրեյլըն վերջնականապէս հրաժարական տուին: Բ. Գուռը յայտնեց որ պատրաստ է համաձայնել բոլոր պետութիւնների կողմից որ և է վճռին բոլորաբարձ մէլիական հարցի վերաբերութեամբ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 մարտի: Սուրբ Աննայի 1-ին աստիճանի չքանչանք աղամանդով ոչ թէ բուխարական դեսպանին է շնորհված, այլ է միլիթն, իսկ դեսպանը ստացաւ ս. Ստանիսլավի 2-րդ աստիճանի չքանչանք աստղը, ալմազներով զարդարած:

ԼՕՆՂՈՆ, 16 մարտի: Հրաժարական տուած Չեմբերլինի և Թրեյլընի փոխանակ նշանակված են, Ստանիսլավի տեղային ինքնավարութեան նախագահ և Գալհաւալի, Եալաւալի միւնիստը:

ԲՐԻՏԱՆԻԱ, 16 մարտի: Զօրքերին 4000 մարդ օժանդակութիւն հասաւ, քաղաքը պատրաստուում է ինքնապաշտպանութեան: Բուր մէջ տեղի ունեցաւ նորից արեւմտահայ ընդհարում: Բերլինի ապակեայ գործարանը յափշտակելու միջոցին ուղանալի մի զօրախումբը յարձակուեց յափշտակողներին վրա, բայց ստիպուեց յետ դառնալ և հէնց այդ ժամանակ մէկ օֆիցէր և մի քանի ուղանալի վերադարձան:

ԲԵՐԼԻՆ, 16 մարտի: Ողբելից բնակիչներին մէնապաշտպանութեան վերաբերեալ կազմած օրինագծի երկու յօդուածները երկրորդ ընթերցումի ժամանակ մարտի 181 ձայնով մեծամասնութեամբ 3 ձայնով զէմ. իսկ մնացած յօդուածները մարտի 181 ձայնով մեծամասնութեամբ 3 ձայնով զէմ. իսկ մնացած յօդուածները մարտի 181 ձայնով մեծամասնութեամբ 3 ձայնով զէմ:

ՓԱՐԻՋ, 16 մարտի: Կատալի գայլից խառնած ռուսներին բռնկելու, Պաստերի մօտ, յաջող է դրնում և մարտի 19-ին նրանք կը վերադառնան դէպի իրանց հայրենիքը, բայց քահանայից, որի վերին շրթունքը, բոլորովին գլխով լինելով կատաղած գայլից, պէտք է փոխարինուի մի արհեստական շրթունքով:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 16 մարտի: «Правительственный Вестник» հաղորդում է, որ «Новое Время» լրագրի Սիբիրի համալսարանի մասին հաղորդածները մեծ մասը ճիշդ է. բնական դպրոցների աշակերտներին այդ համալսարանը ընդունելու հարց է եղած: «Греховный» լրագրի տեղեկութիւններին նայելով, մայրիկ վերջին սպասում է տեղական բարեօրոգումների նախագծի դիտարկմանը քննութիւնը բարձրագոյն կառավարչական շրջաններում, և եթէ տեղի կունենայ նրանց հաստատութիւնը, այն ժամանակ նախագիծը մշակված կերպով կը ներկայացվի պետական խորհրդին աշխատակազմի անդամներին: Գլխավոր քննութիւնը պետական խորհրդի կողմից վերջանում է և օրերումս դրան կը յաջորդի գործարանների բանուորների դրութեան վերաբերեալ նախագիծը:

ՄԵՐՈՒՊՈԼԻ, 16 մարտի: Խօսող-խանից մինչև Մուրգաբ սահմանային սիւների կանգնեցնելը վերջացած է:

ՍՈՖԻԱ, 16 մարտի: Իշխանը առաջուայ պէս չէ համաձայնութիւն հասնակելու ղեկներալ-նահանգապետ հինգ տարի ժամանակով: Գրութիւնը լարված է:

ԱԹԵՆ, 16 մարտի: Ձեռք են առնված բազմաթիւ ֆինանսական միջոցներ՝ զօրքի ծախսերը ծածկելու համար: Պատերազմական միջոցները ուղարկում է դէպի սահմանագիծը զօրքերը նախկին համար:

ԼՈՆԴՈՆ, 16 մարտի: Անգլիան աշխատում է Զուլուստանին պատերազմից յետ պահել: Այստեղ համոզված են, թէ Զուլուստանը չէ կարծում որ պետութիւնները կը վճեն ղեկնու ստիպողական միջոցներով: Զուլուստանը յոյս չունի Բաղկանեան միւս պետութիւնների օգնութեան վրա, բայց յոյս ունի՝ զօրքերի իրան նպաստող բարդ դրութեան վրա:

ՇԱՐԼԵՐԻՆ, 17 մարտի: Քաղաքի մէջ հանգստութիւն է տիրում: Քաղաքը պահպանվում է քաղաքային պահպան զօրքով, որը, սակայն, չափազանց յոգնած է: Բոլոր զօրքերը ուղարկված են շրջակայքները, ուր կրկին մի քանի արեւմտահայ ընդհարումներ ունեցան ապստամբների հետ: Շատ տեղերում կողոպտումները և աւերումները շաւրումնալից են: Շարլերուայով զօրքերը, անցան դէպի Մոն և Լուվր, ուր նշանակված են բանուորների ժողովներ: Մարշալները կայքրած են պրօպագանդաներ, որոնցով հրաւիրում են դէպի ապստամբութիւն: Լուվրի և Հինգհասարկ շրջակայքներում զօրքող բազմ զօրքերի առաջնորդութիւնը յանձնարած է զինեղալ վանդալներին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ				
Մարտի 14-ին				
Ռուսաց 1 ռուբլ	1 լոնդոնի վրա	արժէ	24 3/32	պէնս
—	—	Համարողի վրա	—	204 1/2 պֆ.
—	—	Փարիզի վրա	—	252 1/2 սան.
Ռսկի	—	արժէ	—	8 ռ. 19 կ.
Մաքսային կուպոններ	—	—	—	8 1/2 20 >
Արծաթ	—	—	—	1 25 >
Բորսային դիսկոնտներ	—	—	—	4 1/4 և 6 1/2
Պետակ. բանկ. 5 1/2 տոմս	1-ին շրջանի	100	>	25 կ.
—	—	2-րդ	—	100 > 25 >
—	—	3-րդ	—	100 > — >
—	—	4-րդ	—	100 > — >
—	—	5-րդ	—	100 > 37 >

Արեւելեան 5 1/2 փոխառութ. 1-ին շրջ.	100	>	12 >
—	—	2-րդ	— 100 > — >
—	—	3-րդ	— 100 > 87 >
Ներքին 5 1/2 առաջին փոխառութ.	238	>	— >
—	—	երկրորդ	— 224 > — >
5 1/2 1/2 ընտա	—	—	— > — >
Ռսկեայ ընտա	—	—	180 > 75 >
Նոր կոնսոլիդաց. փոխառութիւն.	154	>	50 >
5 1/2 գրաւական թղթեր կալուած.	—	—	— > — >
—	—	կրեդ. ընկ.	— 157 > 25 >
5 1/2 գրաւական թղթեր խրոմոնի	—	—	— > — >
—	—	կալուած. բանկ.	— 96 > 37 >
6 1/2 գրաւակ. թղ. խրոմոնի կալ. բան.	101	>	37 >
—	—	Պրոտավայի	— 101 > 50 >
—	—	Պետ. Տօրակ.	— 101 > 25 >
—	—	Նիւսվի	— 101 > 25 >
—	—	Մոսկովայի	— 103 > — >
—	—	Բեսարաբ. Տալր.	— 100 > 75 >
—	—	Նիւս. Սամար.	— 101 > 25 >
—	—	Վիլնայի	— 100 > — >
—	—	Թիֆլիսի	— 27 և 43 տ. 97 > 25 >
—	—	Բուխարայի	— 18 և 43 տ. 96 > 75 >

Վոյսկո-կամեյի բանկի ակցիաները	539	>	— >
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	254	>	— >
Ռեբինսկ-Վոյոգովի ընկ.	—	—	86 > — >

Ս. Պետերբուրգի քաղաքային օրվ.	—	—	— > — >
—	—	—	91 > 87 >
Մոսկովայի քաղաք. օրվ. քաղաքային	—	—	92 > 37 >
Օրդնայի	—	—	94 > 50 >

Ս. Պետերբուրգի բոլորայի արամադրութիւնը ամուր է:

ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

ՆԵՐԵՆԱ, Ս. Ղ. Գեղեցիկ յօդուած է. անպատճառ կը տպենք: Կը տպանք ձեր խոստացած յօդուածները:

ՎԱՍԻԼԻՍՏԱՆ, Ա. Շ. Աղաչում ենք ձեզ, եթէ ուզում էք հաղորդել լուրեր, գրեցէք աւելի որոշ և, որ գլխաւորն է, գնեցէք աւելի լաւ թանաք: Գեղին թանաքը սպիտակ թղթի վրա ամենին չէ կարգացում:

ՎԵՐԵՆԱ-ԱՐՈՒՄ, Զօրքտանցի: Ձեր ֆելիետոնը վատ չէ, բայց շատ բաներ միջում կայ, որ ստիպված կը լինենք հանել: Շատ կարելի է կը տպել թղթապատկան ձևով:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԻՆ

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ

Յանձն է առնում թարգմանել ֆրանսերէնից, գերմաներէնից և անգլիերէնից մատչելի գներով: Հարցնել «ՄՇԱԿ» խմբագրատանը:

7—100

ԵԱԳՈՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆՅԱՆ ցաւօք սրտի յայտնելով իր բարեկամներին և ծանօթներին իր մօր ՇՈՒՇԱՆԻ մահը, խնդրում է նրանց շնորհ բերել յուզարկաւորութեանը այսօր ամսիս 18-ին 10 ժամին, իր տանից, որ գտնվում է ԲՆԶՐՈՒԿԱՆ փողոցում Մոլոն և կից, դէպի Մոլոն և Գէորգ Եկեղեցին:

1—1

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

„MESSAGERIES MARITIMES“

(ՄԵՍԱՅԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Հինգշաբթի օրը, 20-ին մարտի, CAMBODGE (Կամբօջ) շոգենաւը, նաւապետ CA-MOIN (Կամուան) դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ ուղիղ Բէյրութ, Գալաթի, Տրապիզոն, Կիրազուլի, Սամսոն, Ինքիւլու, Կ. Պօլսի և Զմիւռնիայի վրայով: Տեղեկութիւնները մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ և ԲԱԳՈՒՄ պ. պ. ԵԼԼԵՐՍ ԲՈՒՐԿԶԱՐԻՆ և ԸՆԿ. իսկ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՈՐԳ ԶԵՂՈՒԲԵԱՆ ԶԵՂՈՒԲԵԱՆՅԱՆ:

2—3

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Չորեքշաբթի, սպրիլի 2-ին, „ՄԻՆԳՐԵԼԻԱ“ (MINGRELIE) շոգենաւը, նաւապետ ՆԵԼ (NEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պօլսի և Մարսէյլ: Տեղեկութիւնները մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին: Բաթումում պ. Կարանիսին և Թիֆլիսում պ. Բէնօն, նախկին Արժուոնու գալիքներում, № 103.

1—4

ԹՈՅԼՈՒԹԵԱՆՍՈՒ Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ՄԱՅՐԱԲԱՎԱԳԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Էլէկտր-Меланге. Մաղերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափալուց: Գինը 2 ռ. սրտակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ուսուցիչ, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Հատուկեամբ, նոյնպէս կաշու անարթութիւնը և բիծերը ոչնչացնելու: Գինը 1 ռ. 75 կ. սրտակի համար, գործածութեան հրահանգով ուսուցիչ, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Կարմիրուց—Eugénie. Եղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի քրտնիկները: Առաջարկվում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար: Գինը 1 ռ. 50 կ. սրտակի համար, գործածութեան հրահանգով ուսուցիչ, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Այդ բոլոր երեք կոսմետիկական արդիւնները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պարունակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր:

Բէրլին Բիւս.

ԱՐՏՈՒԹԻՒՆ ՍՍԱՅԱՆ ՊՈՍԱԿ

Իսկական «Pasta Eugénie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բիծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախորժ երևոյթների դէմ: Տալիս է երեսի գոյնին երեսապարզական թարմութիւն և զեղեցկութիւն: Գինը մի սրտակի համար 1 ռ. 60 կ.

Քլինին-գլիցերինեան պոմադ պերուական բաղաւոր, մաղերը պնդանելու, խտացնելու և մեծացնելու համար: Գ. 2 ռ. սրտակի համար:

Ձեռքերի սպառ: Գինը սրտակի համար 1 ռ. 30 կ.: Իւրաքանչիւր սրտակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «Բերտա» և հարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugénie» սպիտակ և վարդագոյն փայլ. Գ. արկղիկի վրայում 1 ռ. 50 կ., առանց վրձինի 1 ռ. 20 կ.

Մաղերի ներքը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-շէկ. Գ. արկղիկի 3 ռ. Ներքը «Բիւս-Գոտմանի» գործարանի:

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍԻՄ գտնվում Վ. Գրիգորի և Գեղատան ապրանքների մագաղի-նում, Վլոնգոն հիւրանոցի տակ: Զուգարովի տանը:

18—100

Ս Մ Ր Տ				Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Յ Ց			
ԱՆԴՐԿՈՎԱԿԱՆՆԵՐ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ				ՇՈՒԿՆԱԿՆԵՐ «ՌՈՍԱՅ» ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ և առևտրի			
ԹԻՖԼԻՍԻՑ Բաթում փոստային				ՀԻՆԳՇԱԲԹԻ 4 ժամին կէս օրից յետոյ շոգենաւը գնում է ուղղակի ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ՕԴԵՍՍԱ:			
ԲԱԹՈՒՄԻՑ ԹԻՖԼԻՍ գալիս է երեկ, 10 > 25 >				ՇԱԲԱԹ 8 ժամ. երեկոյ. շրջական ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ՕԴԵՍՍԱ:			
ԹԻՖԼԻՍԻՑ Բաթում գնում է երեկոյ. 10 > 55 >				ԿԻՐԱԿԻ Երեկոյան արտասահմանեան ԲԱԹՈՒՄԻՑ դէպի Կ. ՊՈԼԻՍ:			
ԲԱԳՈՒՄԻՑ ԹԻՖԼԻՍ գալիս է առ. 8 > — >				Շոգենաւերը գալիս են ԲԱԹՈՒՄ. Երեքշաբթի երեկոյան Օրդնայից, ուրբաթ առաւ. Օրդնայից (ուղղակի Բէյս) և շաբաթ առաւ. Կ. Պօլսից:			
ԹԻՖԼԻՍԻՑ Սուրամ տպր. սրաս.				Կառքերը, որոնք ճանապարհին չեն գիշերում, ԹԻՖԼԻՍԻՑ դէպի Վաղարշապատ գնում են 4 ժամին կէս օրից յետոյ, նոյնպէս և Վաղարշապատից դէպի ԹԻՖԼԻՍ:			
Գնացքը գնում է կէսօրից յետոյ . . . 3 > 15 >				ԹԻՖԼԻՍԻՑ ԳՐԻԳՈՐ ԶԵՂՈՒԲԵԱՆ և ԳԵՂԱՏԱՆԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԱԿԱՍ			
ՍՈՒՐԱՄԻՑ ԹԻՖԼԻՍ գալիս է առ. 8 > 24 >				Թիսած հաց կրուպատկա ալիւրից ֆուն. 5 կօպ.			
				3օրենի ալիւրից 1 տեսակի — 2 1/2 >			
				2 — — 2 >			
				Թօնրի մէջ թիսած հացի ֆուն. 1 տեսակ 4 1/2 >			
				2 — — 3 >			
				Կրուպ. և ցորենից լավաշներ 1 տեսակ 4 1/2 >			
				2 — — 3 1/2 >			
				3 — — 3 >			
				Տաւարի մսի ֆունտը 1 տեսակի 8 >			
				2 — — 7 >			
				Սուկի — — 14 >			
				Ոչխարի մսի ֆունտը. 9 >			
				Խոզի մսի ֆունտը. — >			